ԵՐՋԱՆԻԿ ԳԵՒՈՐԳԵԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՒՈՐԳԵԱՆ

# ԿՐԿՆՈՒԹԻՒՆ ՈՃԱԿԱՆ ՄԻՋՈՑԸ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Սոյն ուսումնասիրութեամբ, փաստական առատ նիւթի հիման վրայ փորձ է արւում քննելու Գարեգին Նժդեհի գործածած ոճական լեզուամիջոցներից կրկնությունը (կրկնաբանությունը): Տեսակներն են՝ **հնչիւնային** (կրկնուող հնչիւններ կամ հնչիւնակապակցութիւններ), **բառային** (կրկնուող բառեր), **շարահիւսական** (կրկնուող նախադասութիւններ կամ նախադասութեան հատուածներ): Ինչպէս յայտնի է, այս տեսակները կարող են հանդէս գալ մէկ նախադասութեան ներսում իրարայաջորդ կերպով՝ **միաշար** կամ որպէս **զուգահեռութիւններ**:

Վերջիններիս տարատեսակներն են սկզբնակրկնութիւնը՝ յարակրկնութիւն (անաֆորա), վերջնակրկնութիւնը (էպիֆորա), միջնակրկնութիւնը (հեղ. հեղ.), նոյնաբանութիւնը (տաւտոլոգիա), բաղհիւսումը (սիմպլոկա) եւ խաչակերպը (խիազմ)[1]: Ներկայ դէպքում յարակրկնութիւնների պարագայում կրկնութիւնը տեղի է ունենում անմիջականօրէն մօտ կամ քիչ հեռու նախադասութիւնների կամ պարբերութիւնների սկզբում: Վերջնակրկնութիւնները լինում են անմիջականօրէն մօտ կամ քիչ հեռու նախադասութիւնների եւ կամ պարբերութիւնների վերջում, իսկ միջնակրկնութիւնները՝ նախադասութիւնների միջնամասում: Բաղհիւսումները կարող են լինել իբրեւ արդիւնք յարակրկնութիւնների ու միջնակրկնութիւնների կամ վերջիններիս ու վերջնակրկնութիւնների, և կամ յարակրկնութիւնների ու վերջնակրկնութիւնների միահիւսման:

Ինչպէս կտեսնենք, խաչակերպները եւ նոյնաբանութիւնները անհամեմատ սակաւ են հանդիպում: Քննութեան ընթացքում, ըստ հարկի, կնշուի կրկնութեան տեսակը, դրսեւորման եղանակը կամ տարատեսակը:

Կրկնութիւնը (կրկնաբանութիւնը) Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւններում խիստ տարածուած ոճական միջոցներից է: Այն հանդիպում է թէ՛ գեղարուեստական, թէ՛ գիտական երկերում, ինչպէս նաեւ կոչերում ու նամակներում: Որպէս ճարտասանական հնար՝ թերեւս աւելի յաճախ է գործադրւում, քան հռետորական հարցը:

1 Տե՛ս **Հ. Ջ. Պետրոսեան**, Հայերէնագիտական բառարան, Երեւան, 1987, էջ 507:

**1. Կրկնութիւնների բազմազանութիւնը եւ քանակական կողմը: Հնչիւնային, բառային շարահիւսական** տեսակներից առաջինը հազուադէպ է լինում, ուստի սկսենք բառայինից: Ամենապարզունակը *ո՛չ, ո՛չ, չէ՛, չէ՛* ժխտական վերաբերական (եղանակավորող) բառերի կրկնութիւնն է՝ վճռականութիւն արտայայտելիս, որ հանդիպում է գործերի մեծագոյն մասում՝ մեծ, թէ փոքր: Համաձայն բառային տեսակի պահանջի՝ մէջբերենք նմուշներ, որտեղ կրկնւում են առանձին բառերը. «**Ցեղօրէ՛ն, ցեղօրէ՛ն** ապրենք, որպէսզի... Վարդաններն ու Վահաններն անպակաս լինեն Հայոց աշխարհում»[2], «**Զգո՛յշ, զգո՛յշ**, դարձեալ **զգո՛յշ**, ...ահա՛ արդի քաղաքական պահի հրամայականը»[3], «**Քաջերին**, միայն **քաջերին** է զորաւիգում պատերազմների քմայաճ Աստուածը»[4], «...կրեցիր անմարդկային զրկանքներ... մտածելով **միա՛յն, միա՛յն** ուրիշների մասին» (Հ., էջ 596): Այս չորս օրինակում գործածուած են բառային միաշար կրկնութիւններ: «**Դո՛ւ**, երիտասարդ զրուցընկեր, **դո՛ւ**, որ հրամայողաբար պիտ լինես ուժեղ, **դո՛ւ** եւս ապաւինիր վսեմ մտածումի փրկարար ոյժին» (Հ., էջ 102): Իսկ այստեղ բառային յարակրկնութիւն է, քանի որ *դու* բառը հանդէս է գալիս նախադասութիւնների սկզբում:

Շարահիւսական տեսակի պահանջով բերենք նմուշներ, որոնցում կրկնւում են ամբողջական նախադասութիւններ. «...ամէն տեղ կրկնէք հպարտութեամբ՝ **մենք էլ հայ ենք: ...**Ձեր նոր աղոթքը թող լինի՝ **մենք է՛լ հայ ենք**» (ԱՍ), «**Գիտե՛նք այդ ամէնը**: ...**Գիտե՛նք այդ ամէնը**, տեսնում ենք, թէ ինչպէս աստիճանաբար բարձրանում է թրքական տապարը... **Գիտե՛նք այդ ամէնը**, անհանգիստ ենք, բայց **ոչի՛նչ, ոչի՛նչ** չենք անում...» (Հ., էջ 127): Առաջին հատուածում շարահիւսական վերջնակրկնութիւն է: Երկրորդ հատուածում շարահիւսական յարակրկնութիւն՝ համատեղուած միաշար բառային կրկնութեան հետ:

Բազմաթիւ են դէպքերը, երբ միեւնոյն նախադասութեան կամ կից մի քանի նախադասութեան մէջ առկայ են զանազան կրկնութիւններ: Հետեւեալ հատուածներում երկուական են. «**Նա կռուել է**, անդադրում **կռուել է** գիշեր-ցերեկ... բայց եւ այնպէս նա **ապրել է, ապրել է**, որովհետեւ ունեցել է վեհ հաւատ»[5], «... էն **մենք** ենք, **մենք**, որ եօթն անգամ **ոյժեղ**, մահից էլ **ոյժեղ** գիտենք ատել մեր դարաւոր թշնամուն...» (Հ., էջ 422), «**Դու է՛լ, դու էլ** կարող էիր հարուստ լինել, բայց... **մեռար** մենաւոր, **մեռար** անշուք ու չորս պատերի մէջ, **մեռար** ինչպէս վայել է մեռնել հոգով մեծերին» (Հ., էջ 597): Առաջին հատուածում կրկնւում են *կռուել, ապրել*, երկրորդում՝ *մենք* եւ *ոյժեղ*, երրորդում՝ *դու էլ, մեռար* բառերը՝ բոլորն էլ միաշար եղանակով:

---

2 **Գ. Նժդեհ,** Հատընտիր, Երեւան, 2006, էջ 486: Այսուհետեւ սոյն աշխատութեան վերաբերեալ յղումները կնշուեն շարադրանքում (Հ., էջ ...):

3«Ռազմիկ» օրաթերթ, 1943, թիւ 169-174,:

4 **Գ. Նժդեհ,** Ազատ Սիւնիք. «Հայրենիք» ամսագիր, 1925, թիւ 10: Այսուհետեւ սոյն յուշագրութեան վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում (ԱՍ):

5 ՀՀՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 19-20:

Յաջորդ երկու հատուածում կայ երեքական կրկնութիւն. «Մէկ էլ **կրկնեք** այդ սրբազան խօսքերը: **Կրկնեք ամեն** օր, **ամեն** ժամ եւ **ամեն** տեղ, **կրկնեք** հպարտութեամբ (ԱՍ), «...**բոլորը, բոլորը** պիտ համակիւն նոր մտայնութեամբ, պիտ **կրկնեն** նոր ճշմարտութիւններ, **կրկնեն** անվերջ, անդադրում, **մինչեւ որ...** ինքնապաշտպանութեան գաղափարը դառնայ ժողովրդական մտայնութիւն... **մինչեւ որ** հայութիւնը դառնայ ինքնապաշտպանունակ» (Հ., էջ 65): Առաջինում կրկնւում են՝ *կրկնեք, ամէն,* երկրորդում՝ *բոլորը, կրկնեն, մինչեւ որ*: Ըստ որում, *ամեն* և *բոլոր* բառերը միաշար կրկնութիւններ են, իսկ միւսները զուգահեռութիւններ են՝ յարակրկնութիւններ՝ միահիւսուած միջնակրկնութիւնների հետ: Ինչպէս դեռ կտեսնենք, տարբեր կրկնութիւններ կազմող բառերն ու նախադասութիւնները կարող են լինել չորսը, հինգը կամ աւելին, մանաւանդ, եթէ հատուածներն աւելի մեծ են:

Խօսքաշարերում, խօսքի մէջ կրկնութիւնները տարբեր բաշխուածութիւն ունեն: Որոշակի դէպքերում, համաձայն համաբնագրի, դրանք գործածուած են մէկ նախադասութեան մէջ՝ անմիջաբար՝ միաշար, միմեանցից անջատուելով ստորակետով, երբեմն՝ կախման կէտերով: Սա առաւելապէս վերաբերում է բառերին ու բառակապակցութիւններին: Յուզական տեսակէտից այսպէս յաջորդական լինելն աւելի արտայայտիչ է. «**Ամեն ինչ, ամեն ինչ** նրա (Քեռու՝ Արշակ Գաֆաֆեանի) մէջ մատնում էր Հերոսին»[6*] (Հ., էջ 410), «Ապրեց (Եաւորովը) ...եւ **տառապեց, տառապեց** գերմարդկօրէն: ...երգեց եւ հայ ցաւը: ...երգելէ առաջ **ապրեց, ապրեց** խորապէ՛ս» (Հ., էջ 590-591), «**Գարշի՛ր, գարշի՛ր** թուլութիւնից - եւ պիտ ուզենաս լինել եւ պիտ լինես ոյժեղ» (Հ., էջ 142): Այլ դէպքերում մէկ նախադասութեան մէջ կրկնութիւններն ընդմիջւում են բառակապակցութեամբ, դերբայական դարձուածով, իսկ աւելի մեծ ընդհատումներով անջատուելիս՝ նախադասութեամբ, յաճախ կրկնուող բառը պարզաբանող երկրորդական նախադասութիւններով. «**Այսպէ՛ս**, ցեղից պարպուած ժողովուրդներին, **այսպէ՛ս** է պատժում պատմութիւնը» (Հ., էջ 619), «Հայ ոսկեբերանն է նա (Աւ. Ահարոնեան): Նա **խօսքեր** ունի... **Խօսքե՛ր**, որպէս վառուող կերոններ. **խօսքե՛ր**, որոնցից արիւն կը կաթի, **խօսքեր**, որոնք կը շնչեն, հոգի կու տան» (Հ., էջ 149): Հետեւեալ ընդմիջուածութիւնն աւելի մեծ է՝ մի քանի նախադասութեամբ. «Կ՚ուզէի, որ դո՛ւ, հա՛յ երիտասարդ, որ դու իրագործէիր ինքնաճանաչութիւնը... **Ծանի՛ր զքեզ**»: Մի նախադասութիւն անց. «**Ծանի՛ր զքեզ**... իմաստասիրական այդ հրամայականը...»: Մի քանի նախադասութիւն անց. «Ինքնաճանաչմամբ մարդը դառնում է ինքնավստահ... **Ծանի՛ր զքեզ**» (Հ., էջ 95-96): Երկերում կան էլ աւելի մեծ ընդմիջուածութեամբ կրկնութիւններ՝ անջատուած մի-մի մեծ պարբերութեամբ, էջով կամ էջերով, որոնց մասին դեռ խօսք կլինի սոյն յօդուածում:

Այժմ, այն մասին, թէ Նժդեհի երկերում յարակրկնութիւնները նուազա-

6* Հասարակ գոյականի մեծատառով գրութիւնը Գ. Նժդեհինն է:

գոյն երկուսից բացի եւս քանի անգամ են կրկնւում: Քանակական աճին համապատասխան՝ նմուշները ցոյց կտրուեն մեկական օրինակով:

Եռանդամ յարակրկնութիւն. «**Անդրօշա՛կ** - **ան**ցե՛ղ, **ան**պատի՛ւ, **ան**հայրենի՛ք: **Անդրօշա՛կ** - **ան**սի՛րտ, **ան**սո՛ւրբ, **ան**հոգի՛: **Անդրօշա՛կ** - **ան**արի՛, **ան**երկի՛նք, **ան**դէ՛մ» (Հ., էջ 225): Հատուածը «Ամերիկահայութիւնը - ցեղը եւ իր տականքը» աշխատութիւնից է: Բնորոշումները վերաբերում են այն զինուորներին, որոնք հեռացել էին լեգեոնական միութիւնից ու հրաժարւել հայոց եռագոյն դրօշակից: Եռանդամ հարակրկնութեան դասական նմուշ է՝ տարողունակ բովանդակութեամբ եւ ինքնատիպ կազմութեամբ: Ուշագրաւ է, որ *ան-* նախածանցի տասներկու անգամ կրկնութիւնը ստեղծում է տպաւորիչ հնչիւնակապակցական կրկնութիւն, ինչը հազուադէպ է քննւող արձակ նիւթերում, քանի որ առաւելապէս յատուկ է չափածոյ խօսքին:

Քառանդամ բաղդիւսում. «*...ժխտականութիւնը հետեւանք է նախ իրենց* (բոլշեւիկների) *բարոյական քանդուածութեան* [7*]... **Չկա՛յ** Աստուած, բարոյականութիւն **չկա՛յ,** ազգութիւն **չկա՛յ. չկա՛յ**...» (Հ., էջ 207): Մէջբերումը դարձեալ վերը յիշատակած աշխատութիւնից է: Համապատասխան նոյն միտքը հնարաւոր է արտայայտել բազմակի ենթականերով, մէկ՝ *չկայ* ստորոգեալով: Բայց կրկնութիւնը քառանդամ է, ուրեմն՝ այդ կերպ՝ աւելի յուզական:

Հնգանդամ ընդմիջուած միաշար կրկնութիւն. «Բայց եւ այնպէս պէ՛տք է **ապրել**, **ապրե՛լ** անհանգիստ հոգիով, **ապրե՛լ** թրքական եղեռնի ամբողջ յիշողութեամբ, **ապրե՛լ** ցեղօրէն, **ապրե՛լ -** ամոթ համարելով մեկուսի եւ եսական երջանկութիւնը...» (Հ., էջ 500): Այս յուզական կոչը «Ցեղային արթնութիւն» աշխատութիւնից է ու հինգ անգամ ներշնչում է ապրելու ձգտումը:

Վեցանդամ յարակրկնութիւն. «Մեռնելու կամք» յօդուածում վեց պարբերութիւն սկսւում է *հերոս է* բառերով. «**Հերոս է** նա, որի համար կյանքն արդարացում ունի... **Հերոս է** նա, որի հայեացքը ուղղուած է յաւիտենականին... **Հերոս է** բիբլիական Գեդեոնը... **Հերոս է** Կլեմանսոն... **Հերոս է** Քեռին... **Հերոս էր** Դանտոնը...» (Հ., էջ 560): Եւ այս վեցանդամեայ կրկնութիւններից իւրաքանչիւրին յաջորդում են հաստատող պարզաբանումներ:

«Իմ օրագրէն» աշխատութեան մէջ *ոյժեղ* բառով կազմուած է եօթանդամ յարակրկնութիւն (Հ., էջ 27-28): «Ազատ Սիւնիք» յուշագրութեան մէջ առկայ է «*...ոյժեղը նա չէ*» նախադասութեամբ ութանդամ յարակրկնութիւն՝ երկար ընդմիջումներով:

«Ցեղակրօնութիւնն իբր յաղթանակի զօրոյթ» յօդուածը բաղկացած է ինը մասից, իւրաքանչիւր մասն աւարտւում է *«Ցե՛ղն է մեր ապաւէնը»* նախադասութեամբ. իննանդամեայ շարահիւսական վերջնակրկնութեան ակնառու օրինակ է (Հ, էջ 480-489):

7* Շեղ գրութիւնը Գ. Նժդեհինն է:

Մրցանիշայինը, թերեւս, «Եւ զոհ եւ զոհարար» մօտ երկէջանոց յօդուածն է, որտեղ հեղինակն ունի *տեսաւ* բառով կազմուած կրկնաբանական բաղհիւսում՝ բաղկացած 11 յարակրկնութիւնից եւ 4 միջնակրկնութիւնից (ընդհանուր հաշուով 15 կրկնութիւն): Պատկերւում են Եղեռնի սարսափները՝ իւրաքանչիւր *տեսաւ-ից* հետո՝ մէկ այլ ահաւոր տեսարան, մէկ այլ զարհուրանք, մէկ այլ ոճրագործութիւն... բայց մէջբերենք այդ հատուածը եւս. հասկանալի է, կատարուած են կրճատումներ, մասնաւորապէս հանուած են ընդմիջող նախադասութիւնները. «...ծագող արեւը Հայաստան երկրի փոխարէն **տեսաւ** մի կատարեալ գեհէն: **Տեսաւ** խաչի նսեմ ստուերն ընկած մեր հազարամեայ հայրենիքի վրայ: **Տեսաւ,** թէ ինչպէ՛ս մի խաւարասէր ազգ... կը հրոսէր մի անզէն... ժողովրդի դէմ... **Տեսաւ,** թէ ինչպէ՛ս կը մոխրանային... գիւղերը... **Տեսաւ** խուժդուժ գործը տապարի, եաթաղանի... **Տեսաւ**, թէ ինչպէ՛ս կը խլուէին կանայք ու կբռնաբարուէին: ...Գործի վրայ **տեսաւ** թրքական սանձարձակ շնութիւնը... **Տեսաւ**... մեր աղջիկները, որոնք Եփրատի ալիքները կը գրկէին: **Տեսաւ**, թէ ինչպէ՛ս հայրը հաւաքեց ընտանիքին իր յարկի տակ եւ այրեց ողջ... Արեւը **տեսաւ** տուն, տանիք, ճամբաներ՝ արիւնով ներկուած: **Տեսաւ**... մահուան հետ կռուի մտած արնաթաթախ հայորդիներ: **Տեսաւ**, թէ ինչպէ՛ս «շներն ու շնագայլերը մեր սիրելիների սրտերը կը կրծէին»: **Տեսաւ**... վաճառքի հանուած հայ կիներ ու մանուկներ... **Տեսա՛ւ**, հայոց արեւը **տեսա՛ւ** այդ ամէնը, եւ խաւարեց այդ օրը» (Հ., էջ 613):

Տարբեր երկերում գործածուած են ոչ միայն բազմանդամ, այլեւ համատեղ մի քանի կարգի կրկնաբանութիւններ: Այսպէս. «Հայու ճամբան. մեծ զղջումի ճամբան» յօդուածում կան տասի չափ տարբեր բառեր, որոնք կրկնւում են համապատասխանաբար երեքից-ութ անգամ (Հ., էջ 616-620): Բազմանդամ ու բազմակի, բառային ու շարահիւսական կրկնութիւններ են գործածուած համատեղ՝ 13.06.1920 թ. Ղափան Գենուազի ռազմական ոյժերին ուղղուած կոչում եւ ուրիշ-ուրիշ գործերում:

**2. Կրկնութիւնների մի քանի յատկանիշ:** Ինչպէս ընդհանրապէս խօսքում, այնպէս եւ Նժդեհի ստեղծագործութիւններում, կարելի է մատնացոյց անել խնդրոյ առարկայ ոճական միջոցի մի քանի յատկանիշ:

**ա. Խաչակերպ (շրջուն) կրկնութիւն:** Շրջուն լինելը յատուկ է երկանդամ զոյգերին. երկրորդը առաջինի կրկնութիւնն է՝ շրջուն շարադասութեամբ: Տեղի է ունենում հետեւառաջութիւն, որի հետեւանքով ենթական դառնում է ստորոգելիական վերադիր եւ հակառակը, հանգոյցը նախորդում է ստորոգելիական վերադիրին, ստորոգեալը՝ ենթակային: Սրանք, ըստ էութեան, խաչակերպներ (խիազմ) են: Հաշուել ենք տասի չափ խաչակերպներ: Երեքի դէպքում տեղաշարժւում է ենթական՝ միւս փոփոխութիւններով հանդերձ. «**Հայը լինելիական** է, - հաստատում է հայոց հեթանոս կրօնը: **Լինելիակա՛ն է հայը** - ահա՛ ակն ու աղբիւրը մեր մեծ Յոյսի Ջօրոյթի» (Հ., էջ 487), «**Ճշմարտօրէն զօրաւո՛ր է**

**արդար**: Եւ, միայն **արդա՛րն է ճշմարտօրէն զօրաւոր**» (Հ., էջ 368): Կամ. «**Ղեկաւարը - դա ինքը զօրքն է: ...Զօրքը - դա ինքը ղեկաւարն է**»[8]:

Զորս դէպք վերաբերում է ստորոգելիական վերադրին ու հանգոյցին, որոնցից երեքում նոյն *եղիր* բայաձեւն է. «Զկորցնել չափի զգացումը, երբ դիպւածը մեր ախոյանին մեր ձեռքն է յանձնել: **Եղի՛ր արդար, արդա՛ր եղիր...**» (Հ., էջ 368), «Նորահաս սերունդ, ...կանչում եմ եւ ասում քեզ. - **Եղի՛ր ցեղակրօն, ցեղակրօ՛ն եղիր**...» (Հ., էջ 494), «...առաջնո՞րդ ես, ուրեմն՝ **եղի՛ր ազնիւ, ազնիւ եղի՛ր**... - Դա ճակատագրական նշանակութիւն ունի ժողովրդիդ... համար» (Հ., էջ 578), «...խնայիր տկարներին, եթէ թշնամիդ իսկ լինի: ...**Մնա՛ մարդ, մարդ մնա՛**» (Հ., էջ 392): Մէկ դէպքում բայից առաջ դրուած կոչականը շարժում է բայից յետոյ. «**Անցո՛րդ, կա՛նգ** առ, **կա՛նգ առ, անցո՛րդ**, այս անյայտ հողաթմբի առջեւ...» (Հ., էջ 407): Մէկ այլ դէպքում փոխատեղւում են շաղկապական յարադրութեան բայերը. «Սիւնիքի տեղագրութիւնը այդ երկրում շարժուողից անվերջ **բարձրանալ ու իջնել, իջնել ու բարձրանալ** է պահանջում» (ԼԳ): Խաչակերպ կրկնաբանութիւնն ասելիքն աւելի հաստատուն դարձնելու միջոցներից մէկն է:

**բ. Կրկնութիւնը հարցի տեսքով**: Այսպիսի կրկնութիւնը միատեղւում է ճարտասանական հարցի հետ: Հարցական բառը կամ նախադասութիւնը հնչում է երկու կամ աւելի անգամ: Ճարտասանական երկու միջոցների միաժամանակեայ գործածութեան հետեւանքով ուժգնանում են մտքի իմաստային ու յուզական կողմերը: Այդպէս է հնչում *«...օտա՞րն է մեղաւոր»* հարց-կրկնութիւն նախադասութիւնը «Օրերի օրը» հրապարակախօսական յօդուածում, որտեղ նշում է հայութեան կեանքի հինգ թերացում. «...**օտա՞րն է մեղաւոր,** որ... հայրենասիրութեան կրակն ու լոյսը չեն թափանցել մեր ժողովրդի բոլոր խաւերի մէջ: **Օտա՞րն է մեղաւոր**, երբ... հայութեան մի մասը... կը շարունակէ գործածել... շնական ժողովրդի լեզուն... **Օտա՞րն է մեղաւոր**, որ դեռ կան հայեր, ...որոնց կողմից ... հնագոյն ժողովրդի անդամ լինելը դեռ չէ գիտակցւում որպէս գերագոյն երջանկութիւն: **Օտա՞րն է մեղաւոր** մեր կեանքում տիրող մտա–բարոյական անիշխանութեան համար: **Օտա՞րն է մեղաւոր** այդ բոլորի համար: Թողնենք օտարներին մեղադրելու թոյլերին յատուկ ցաւը...» (Հ., էջ 446): Նկատելի է, որ նշուած համատեղութիւնը Նժդեհի երկերում տարածուած է: Նոյն այս յօդուածում *ո՞վ կարող է* հռետորական հարցը տրւում է վեց անգամ: «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութեան մէջ, մարդկութեան երջանկութեան խնդրով մտահոգ, *ինչո՞ւ* հարցը կրկնում է երեք անգամ. «**Ինչո՞ւ, ինչո՞ւ** այդպէս: **Ինչո՞ւ** կը տառապի մարդկային ցեղը» (Հ., էջ 93): «Ինչո՞ւ տարօնականութիւն» յօդուածում *ո՞ր* հարցական դերանունը կրկնւում է երեք անգամ՝ վերաբերելով տարբեր գոյականների. «*Ո՞ր* հայ գրողը, *ո՞ր* ճշմարիտ

8 **Գ. Նժդեհ,** Լեռնահայաստանի գոյամարտը. «Հայրենիք» ամսագիր, 1923, սեպտեմբեր: Սոյն ամսագրի վերաբերեալ հետագայ յղումները կտրուեն շարադրանքում (ԼԳ):

հայրենասէրը, եւ մասնաւորապէս, *ո՞ր* ռազմիկը Հայաստանին սպառնացող վտանգի վայրկեաններին չէ ոգեկոչել Հայրենիքի համար մեռնել ուխտած Մամիկոնեանների օրինակը» (Հ., էջ 540): «Ամերիկահայութիւնը - ցեղը եւ իր տականքը» աշխատութեան մէջ, այն կապակցութեամբ, որ ամենուրէք, կեանքի նոր պայմաններին համապատասխան ժողովուրդները կատարելագործում են իրենց հայրենիքների պաշտպանունակութիւնը, *ո՞ւր* հարցը հնչում է հինգ անգամ. «...**ո՞ւր, ո՞ւր** «նոր երգ» չի երգում, **ո՞ւր** հայրենիքի փրկութեան համար ձեռք չեն առնում «գերագոյն միջոցներ», **ո՞ւր,** մեր երկրագնդի վրայ, ...**ո՞ւր** չի գործում կեանքի բնաշրջումը» (Հ., էջ 257): Այսպէս՝ ճարտասանական նպատակներով ուրիշ-ուրիշ երկերում:

**գ. Բազմաշաղկապութիւն:** Ոճագիտութեան մէջ ոմանք բազմաշաղկապութիւնը համարում են առանձին ոճական միջոց, ուրիշները՝ որպէս կրկնաբանութիւն ոճական միջոցի մի դրսեւորում: Մասնաւորաբար՝ այդպէս է ներկայացնում Լ. Եզեկեանը ոճագիտութեան իր բուհական դասագրքում, մի մոտեցում, որին մենք նոյնպէս հակամէտ ենք[9]: Իրոք. ի՞նչ է բազմաշաղկապութիւնը, եթէ ոչ միեւնոյն կամ անմիջականօրէն կից նախադասութիւններում շաղկապի բազմակի կրկնութիւն, որով առանձին-առանձին ընդգծում է այն ամէնը, ինչը խօսելու պահին առընչւում է ներկայացուող իրականութեան հետ: Մինչ այժմ շարադրանքի մէջբերումներում բազմիցս հանդիպել ենք գոյականների, ածականների, դերանունների, բայերի, մակբայների, ինչպէս նաեւ ոչ նիւթական խօսքի մասերի՝ կապերի, վերաբերականների կրկնութիւնների: Քննուող ոճական միջոցը առընչւում է բոլոր խօսքի մասերի հետ, ուստի շաղկապների կրկնութիւնը չի կարող բացառութիւն լինել եւ կազմել առանձին ոճական միջոց: Գարեգին Նժդեհի երկերում քննուող ոճական հնարը, մասնաւորապէս, վերաբերում է *եւ* շաղկապին, որը, ինչպէս ընդունուած է, ամէն կրկնութեան հետ նաեւ շեշտւում է: Ինչպէս. «...արիութեան պատգամախօսները պիտ դառնան հայ մտաւոր եւ հոգեւոր կեանքի բոլոր ղեկավարները: **Եւ** դպրոց, **եւ** եկեղեցի, **եւ** քաղաքական կուսակցութիւններ, **եւ** մամուլ, **եւ** ապակուսակցական կազմակերպութիւններ ... մինչեւ որ ... հայութիւնը դառնայ ինքնապաշտպանունակ» (Հ., էջ 65): Կամ՝ 17.09.1920 թ. կոչում. «...դիակս թաղիր Խուստուպի ամենաբարձր կատարին, որտեղից երեւայ ինձ **եւ** Ղափանը, **եւ** Գենվազը, **եւ** Գողթանը, **եւ** Գեղվաձորը»[10]: Յաջորդ նմուշում մէկ նախադասութեան մէջ շաղկապներն ընդգծում են թէ՛ գործողութիւնը կատարողներին (ենթակայ), թէ՛ գործողութիւն կրողներին (ուղիղ խնդիր): Մէջբերումը կատարւում է 25.08.1920 թ. ՀՀ զինուորական նախարարին ուղղուած գրութիւնից. «**Եւ** այսօր այդ բոլորը, **եւ** Ադրբէյջան, **եւ** Ղարաբաղ, **եւ** բուն Զանգեզուր, ոտքի

9 Տե՛ս **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Երեւան, 2003, էջ 364-365:

10 **Գ. Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից. ,Հայրենիք ամսագիրե, 1924, հունվար-ապրիլ: Հետագայ յղումները՝ շարադրանքում (ԷԼԳ):

հանած իրենց բովանդակ ոյժերը՝ **ե՛ւ** զօրք, **ե՛ւ** տեռոր, **ե՛ւ** թղթադրամների դէզեր, կաշուից դուրս են գալիս ընկճելու ... Ղափանը»:

Բազմաշաղկապութեանը Գարեգին Նժդեհը դիմել է նաեւ իր քնարական երկերում, որտեղ ոչ թէ գաղափարախօսութեան տարածում կամ մարտական տրամադրութիւններ են, այլ՝ խոհական կամ թախծի ու ջերմութեան: Իրողութիւնները զատզատող թուարկումները թէեւ կարելի էր բաժանել միայն ստորակէտներով, սակայն հեղինակը դարձեալ օգտագործել է նաեւ շաղկապները, որոնք ուշադրութիւնն աւելի են գրաւում հարկ եղածի վրայ, ինչը ցանկալի է համարում. «Եւ ինձ թւում էր ... Որ **ե՛ւ** մարդ, **ե՛ւ** սողուն, **ե՛ւ** թռչուն, ...իմ անունն են օրհնել...» (Հ., էջ 409): Եւ կամ. «Ա՜հ, նա սիրում էր **ե՛ւ** արշալոյսը պուրպուր, եւ վերջալոյսը տխուր, **ե՛ւ** երգն անխօս ոսկեշող աստղերի...» (Հ., էջ 413):

**դ. Առանց լրացումի կամ լրացումով կրկնաբանութիւններ:** Որոշակի խօսքաշարերում կրկնութեան անդամները հանդէս են գալիս առանց լրացումների եւ նոյնական յաջորդում են միմեանց: Այդպիսիք արդէն եղել են եւ դեռ կլինեն յաջորդիւ: Մի անդամը միւսից առաւելապէս տարբերւում է ինչ-ինչ լրացումներ ունենալով: Սովորաբար այսպիսին են լինում երկրորդ կամ յաջորդ անդամները, սակայ դէպքերում՝ առաջինը: Լրացումները բերում են իմաստային նրբագծեր, թարմ հնչեղութիւն եւ նպաստում ասելիքի ամբողջացմանը: Եթէ կրկնուող բառերը գոյականներ են, նախորդ անդամից տարբերւում են յատկացուցիչ կամ որոշիչ ունենալով. «**Համբո՛յր**, ջերմ **համբոյր** Հայ Հայրենիքին եւ իր մեծ վշտակրին...» (Հ., էջ 151), «Եւ **սովորութիւն կայ**, գրչի ու գրքի տէր բոլոր ժողովուրդների **իմաստուն սովորութիւն կայ**, պատերազմից յետոյ հաշուի նստել, պարզել իրենց յաջողուեանց եւ պարտութեանց պատճառները» (Հ., էջ 82), «**Պատմութիւնը, անկաշառ պատմութիւնն իր խօսքը, իր անէծքի խօսքն** ունի ասելու նրանց» (ԱՍ):

Եթէ կրկնուող բառերը բայեր են, միմեանցից տարբերւում են խնդիրներ (առաւել յաճախ ուղիղ խնդիր) կամ պարագաներ ունենալ-չունենալով: Նախ ուղիղ խնդիրների օրինակներ. «**Անցի՛ր**, հա՛յ երիտասարդութիւն, **անցի՛ր Ռուբիկոնը**, որի հանդիպակաց ափին քեզ յաղթութեան դափնին է սպասում» (Հ., էջ 95): «Նա **յաղթել է** այլեւս, **յաղթել** իր բանակի **անինքնավստահութեանը, վախին**» (Հ., էջ 46): Եթէ գոյականների դէպքում յատկացուցիչների համեմատութեամբ շատ ու շատ աւելի որոշիչներ ունեցող բառերն են, ապա այժմ խնդիրների համեմատութեամբ շատ աւելի բազմաթիւ են, բազմազան պարագաներով տարբերուող անդամները: Այսպիսիներից են. «Կ՚ուզէի, որ այդ ամէնը **գիտակցէիր**, եւ **լա՛ւ գիտակցէիր**, ամերիկահայ ուսանողութիւն» (Հ., էջ 257), «Եւրոպական երեք մեծ ազգերի ընտրանին վաղուց է **դատել** թուրքը, **դատել բարոյապէս**» (Հ., էջ 611), «Կայ մի ողբերգական թիւրիմացութիւն, որը **պէտք է փարատել - օր, ժամ, վայրկեան առաջ պէտք է փարատել**» (Հ.,

էջ 497): Երբ կրկնուողը ստորոգելիական վերադիրն է, լրացումն աղերսում է դրանցից մէկի հետ. «Արդարութիւնը ... պաշտպանելու համար **պէտք է լինել** ոչ միայն արդար, այլ եւ՝ **տղամարդ, եօթնի՛ցս տղամարդ**» (Հ., էջ 628), «**Հի՛ն է, աշխարհի չափ հի՛ն է** այդ երեւոյթը... ամէն մեծ գաղափար ունեցել է իր մանր թշնամիները» (Հ., էջ 636): «**Գռեհիկ, անհայրենասիրութեան աստիճան գռեհիկ է** ոմանց հայրենասիրութիւնը» (Հ., էջ 602):

**ե. Ենթակայի ու ստորոգեալի կրկնութիւն:** Միեւնոյն կամ կից նախադասութիւններում կրկնւում է նոյն ենթական՝ ամէն անգամ ունենալով մէկ այլ ստորոգեալ, որոշ դէպքերում՝ մէկ ընդհանուր ստորոգեալ: Ուշադրութիւնը կենտրոնացւում է գործողութիւնը կատարողի վրայ: Եւ կամ նոյն կերպ կրկնւում է ստորոգեալը՝ ունենալով ընդհանուր, որոշ դէպքերում՝ տարբեր ենթականեր: Ուշադրութիւնը կենտրոնացւում է գործողութեան վրայ: Առաջանում են իւրատեսակ բազմակի ենթականեր կամ բազմակի ստորոգեալներ: Ինչպէս. «Մխիթարական չէին եւ ինտելիգէնտ ոյժերի, ինչպէս եւ մեր կուսակցական ընկերների մի մասի փոխյարաբերութիւնները: Դժգոհ էին **բոլորը,** քննադատում էին **բոլորը,** մեղադրում ու մեղադրւում **բոլորը**»[11], «**Հա՛յը, հա՛յն է յաղթանակած** այդ գոռ գոյամարտում» (Հ., էջ 332), «Առանձին չի լսում բոլշեւիկեան հայամերժ խօսքը. այո՛, **թո՛ւրքը, թո՛ւրքը, թո՛ւրքն** է ամէն տեղ» (Հ., էջ 203): Եւ կամ. «...արցունք կար նրա աչքերի մէջ: **Լալի՛ս էին, լալիս** բոլորը» (Հ., էջ 564), «Ես **տեսել եմ** մեր **ժողովրդին** նման հոգեվիճակում. **տեսել նրան** իր բիբերի մէջ, **տեսել** խռովքոտ **տողանցն** իր սերունդերի, **տեսել** ռազմի իր **սուրբերին**...» (Հ., էջ 344), «**Կա՛յ, կա՛յ մի բան**, որ թունաւորում է մեր կարճատեւ ուրախութեան վայրկեանները ... **Կա՛յ** մի խորհրդաւոր **ձեռք** ... **Կա՛յ** մի պատուհասող **ոյժ**...» (Հ., էջ 93):

**3. Կրկնութիւնների կիրառութիւնները:** Կրկնութիւնները որպէս ճարտասանական միջոց, գործադրւում են տարբեր նպատակներով: Որո՞նք են դրանք Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւններում: Մենք կանգ կառնենք առաւել յաճախ հանդիպող շարժառիթների վրայ: Բայց նախ վերյիշենք, որ գործածւում են ինքնուրոյն բառերը, նախադասութիւնները, որոնք կրկնւում են երկուսից տասը, սակաւ դէպքերում աւելի անգամ. լինում են խաչակերպ, հարցական բնոյթի, առանց լրացումների կամ լրացումներով: Խնդրոյ առարկայ ստեղծագործութիւններում ի՞նչ են արտայայտում այդ կրկնութիւնները:

**ա. Չափ ու քանակ:** Անուանական խօսքի մասերի հետ առնչւող կրկնութիւնները ցոյց են տալիս առարկաների, առարկայօրէն ըմբռնուող երեւոյթների մեծաքանակ, բազմաթիւ լինելը: Ընդ որում, որքան աւելի է կրկնութիւնը, այնքան աւելի է թուի մեծութեան տպաւորութիւնը: Երկու անգամ կրկնելով *դարեր* բառը՝ հեղինակը նկատի է ունենում շատ դարեր, երեք անգամ կրկնելով *շուշաններ* բառը՝ շատ շուշաններ. «**Դարե՛ր, դարեր** են անցել ... Դեռ

11 ՀՅԴ ԿԱ, Դատական գործ, թ. 213-230:

դղրդում է Վարդանի Աւարայրեան խօսքը...» (Հ., էջ 405), «Ես տեսնում եմ ... **շուշաննե՛ր, շուշաննե՛ր,** աւելի փարթամ... **շուշաններ...**» (Հ., էջ 376): Նոյն կերպ գոյականաբար կրկնւում է *նոր* ածականը, *բոլոր* դերանունը. «Թող ... դիւցազնօրէն ընկնեն **նորերն** ու **նորերը** ... մեր Հայրենիքում...» (Հ., էջ 417), «... ցեղի գաղափարն է հոգեբանօրէն միատարրում ... **բոլորի՛ն, բոլորի՛ն** » (Հ., էջ 635): Ի դէպ, *բոլոր* դերանուան կրկնութիւնը աչքի է զարնում Նժդեհի երկերում (Հ., էջ 25, 93):

Բայական կրկնութիւնները ցոյց են տալիս, թէ քանի անգամ է կատարւում գործողութիւնը, ինչ չափով, երբեմն նշւում է թիւը. «Ու յուզած ու մտախոհ... պատից խլեց հոր հրացանը, **համբուրեց, համբուրեց մէկ էլ, համբուրեց եօթն անգամ**, գրկեց ու...» (Հ., էջ 416), «Գի՛ւղը ... բազմաչարչար որդին **կը քրտնէ, կը քրտնէ մէկ էլ, կը քրտնէ եօթն անգամ** եւ այսպիսով հողից հաց կը քամէ» (ԳԵ, էջ 11), «Կամաւորներ հասան ... Եւ **ընկան** նրանք, **ընկան** Եաւորովի հայրենիքի համար, **ընկան** ժպտադէմ» (Հ., էջ 592):

**բ. Յորդոր, խնդրանք, կոչ:** Ի տարբերութիւն մէկ անգամ հնչելու, երկու կամ մանաւանդ աւելի անգամ հնչողութեան դէպքում կրկնութիւնները դառնում են առաւել ներգործուն ու յուզական: Տարբեր տրամադրութիւններով, նրբերանգներով, նպատակներով հանդիպում են բոլոր ժանրային ստեղծագործութիւններում. կան չորս-հինգ անգամ կրկնուողներ մի փոքր հատուածում: Բարեկամներին գրած նամակներում մտահոգութիւններ են արտայայտւում տարբեր հանգամանքների վերաբերեալ: Ինչպէս. «**Ջգո՛յշ, զգո՛յշ,** էլի **զգո՛յշ** պիտի լինել, սիրելի Օհաննէս...»[12]: Լեռնահայաստանի գոյամարտի տարիներին մշտապէս զգացւում էր սննդի, բայց յատկապէս ռազմամթերքի սպառնագին պակաս, եւ Հայաստանի հանրապետութեան զինուորական նախարարին ուղղուած գրութիւնները տանում էին աղաղակող խնդրանք. «...ռազմամթերքի սպառման վտանգը իր հրէշաւոր հասակով... տղաները **փամփուշտ, փամփուշտ** եւ **փամփուշտ** էին խնդրում» (26.10.1926 թ.), «**Օգնութիւն, օգնութիւն, օգնութիւն**՝ իր վերջին փամփուշտը կրակող Ղափան-Գենվազին» (19.10.1920 թ.), «**Արագացրէ՛ք**. ժամը, վայրկեանը ճակատագրական նշանակութիւն ունի, **արագացրէ՛ք** օգնութիւնը»[13]: Իսկ ընդհանուր առմամբ, Նժդեհի յորդորները գիտական աշխատութիւններում ու հրապարակախօսական յօդուածներում հնչում են որպէս մի-մի պատուիրան՝ ուղղած հայ ժողովրդին, երիտասարդութեանը, մտաւորականութեանը եւ բխում են նրա մի գաղափարախօսութիւնից: Ամէն, ամէն յորդոր՝ գաղափարական մի դրոյթ: *«Թոյլերին չեն յարգում, ճնշում են»:* Ելնելով սրանից՝ իր տարբեր երկերում նա քարոզում է մոռանալ թուլութիւնը: Ահա մասնաւորապէս սիւնեցիներին ուղղուած պատուիրաններից վերջինը՝ «Ազատ Սիւնիք» յուշագրութիւնից. «Եղի՛ր **ոյժեղ,** էլի՛ **ոյժեղ**

12 **Գ. Նժդեհ**, Նորահայտ նամակներ, Երեւան, 2011, էջ 11:
13 ՀՀՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 7, շրջ.:

ու միշտ **ոյժեղ**»: Սա համարում է հոգեբանական պաշտպանութեան միջոց: Միւս յորդոր-պատուիրանը՝ «Խորհրդածութիւններ» յօդուածից. «Ժողովո՛ւրդ, ...երդուեցնում եմ սերունդներիդ - **չներե՛լ, չներե՛լ** թուրքին... ներում են թշնամուն, բայց ո՛չ եւ իր կէսի սպանիչին...» (Հ., էջ 568): Երրորդ պատուիրան-յորդորն ուղղուած է հայ ցեղային զգացողութիւնը մոռացողներին, որ դարձեալ արծարծում է տարբեր երկերում, իսկ «Հայու ճամբան՝ մեծ զոչումի ճամբան» յօդուածում՝ հետեւեալ կերպ. «... - փորձեցին սպանել ցեղը հայութեան մէջ՝ ոչնչացնելով մեր ազգի ցեղազգաց տարրը: **Չմոռանա՛նք, չմոռանա՛նք, չմոռանա՛նք** այդ իրողութիւնը...» (Հ., էջ 618): Ցանկանալով, որ երիտասարդութիւնը ճանաչի ինքն իրեն, իր կարողութիւնները՝ «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութեան հինգերորդ՝ «Ինքնաճանաչութիւն» մասում երեք անգամ կոչ է անում. «**Ծանի՛ր զքեզ**» (Հ., էջ 96, 98): Եւ ապա համընդգրկուն ու քաջալերիչ կոչը՝ *ապրե՛լ*, որ հնչում է «Ցեղային արթնութիւն» աշխատութեան հինգերորդ խօսքում, մէկ նախադասութեան մէջ՝ հինգ անգամ. *ապրե՛լ*, ինչպիսին էլ լինի հոգեբանական վիճակը, յանուն գաղափարի. «Բայց եւ այնպէս պէ՛տք է **ապրել, ապրե՛լ** անհանգիստ հոգիով, **ապրե՛լ** թրքական եղեռնի ամբողջ յիշողութեամբ, **ապրե՛լ** ցեղօրէն, **ապրե՛լ** ամօթ համարելով մէկուսի եւ եսական երջանկութիւնը...» (Հ., էջ 500): Ընդհանրապէս, կրկնութեամբ չորս-հինգ կամ աւելի անգամ հնչող յորդորանք-կոչերը կամ կոչ-յորդորանքները մշտագոյ են մարտագրերում ու մարտական հրամաններում՝ յարձակում սկսելուց առաջ, ուղղուած զինուորութեանն ու բնակչութեանը՝ իւրաքանչիւր դէպքում կրկնութեամբ ուշադրութիւն հրաւիրելով տուեալ պահին առաւել կարեւոր հանգամանքի վրայ (Հ., էջ 421-423): Սակայն այսպիսի մարտակոչերը ոգեշնչում են ոչ միայն ռազմադաշտում կռուողներին: Նոյնպիսի մարտակոչեր կան գիտական աշխատութիւններում՝ ուղղուած հասարակութեանը: Մէջբերենք երկու հատուած «Բանտային գրառումներից», առաջինը «Ռազմական խոհեր» մասից, որտեղ վեր է հանում յանուն գաղափարի մարտի նետուողների վեհութիւնը եւ նրանց կռւում ոգեւորելու՝ ղեկաւարի ունակութիւնը. «**Ի զէ՛ն**: Որքա՜ն թափ ու թեւ կայ այդ սեղմ խօսքի մէջ: Քիչ լեզուների է տրուած հայոց այդ մի զոյգ բառերի արտայայտչական թափը: **Ի զէ՛ն** - վագներեան մի ամբողջ սինֆոնիա է դա, հերոսական խելայեղիչ մի մարշ... - **Ելէ՛ք, ելէ՛ք**, կռուի **ելէ՛ք** նորէն... - **ի զէն**... ես կ՛ուզէի այդ ռազմականչը շրթունքներիս մեռնել...» (Հ., էջ 395-396): Հատուածը կառուցուած է երկու կրկնութեամբ՝ *ի զէն* եւ *ելէք*: Երկրորդը աշխատութեան վերջնամասից է՝ «Իմ տապանագիրը» յաւելուածից: Հեղինակը դիմում է իր հողաթմբի առջեւ կանգ առնող անցորդին, այն է՝ հասարակութեանը. «**Անցո՛ր դ**, ...դու լալի՞ս ես... Ի **մա՛ռ տ, անցո՛ր դ**, ի **մա՛ռ տ**, որպէսզի տարաբնակ հայը՝ հայրենադարձ, եւ մեր մեռելները գերեզման ունենան: **Ի մա՛ռ տ** ...» (Հ., էջ 407):

Ընթերցող հասարակութեանն ուղղուած այսպիսի ռազմակոչերը նոյնքան

բորբոքուն են, որքան Սիւնիքի բնակչութեանը ուղղուածները՝ գոյամարտի տարիներին: Հետեւեալ նմոյշը կառուցած է նախորդներից տարբեր՝ մէկ այլ եղանակով՝ տրական յոլովով գոյականային բառաձեւերով. «**Ոտքի՛,** խաբուած ժողովուրդ, **ոտքի՛** ել, փրկութիւնդ մօտ է: **Ոտքի՛,** զէնքը ձեռքիդ...» (Հ., էջ 426):

Եւ այսպէս. յորդորները, կոչերը Գարեգին Նժդեհի երկերում կառուցուած են չորս կարգի կրկնութիւններով՝ հրամայական եղանակի բայաձեւերով, անորոշ դերբայներով, *ի* նախդրաւոր բառակապակցութիւններով, տրական յոլովով գոյականային բառաձեւերով:

**գ. Ժամանակ ու տեւականութիւն:** Կրկնութիւնների միջոցով ցոյց է տրւում գործողութեան կատարման ժամանակը կամ տեւական բնոյթը: Որոշակի դէպքերում ուշադրութիւն է հրաւիրւում յատկապէս որեւէ մասնակի ժամանակահատուածի վրայ. «Զինուորնե՛ր, ...**Վաղը**, երբ Ձեր խենթ ... զարկերից թշնամին կը թողնի իր գյուղերը .... **Վաղը**, երբ հայ գերիները ... ծնկաչոք կ՛աղօթեն ... **Վաղը**, երբ քաջերդ Աջիբաջ հասաք, յիշէք Խալիլբէգեան սեւ օրերը... Յիշէ՛ք այդ եւ եղէք անխնա՛յ...» (1919, 30 նոյեմբեր, հրամանից. Հ., էջ 420): Կամ. «Ինքնապաշտպանութիւն... պիտ կրկնեն... կրկնեն անվերջ... **մինչեւ որ** արիական ինքնապաշտպանութեան գաղափարը դառնայ ժողովրդական մտայնութիւն... հոգեբանութիւն, **մինչեւ որ** հայութիւնը դառնայ ինքնապաշտպանունակ» (Հ., էջ 64-65): Համապատասխան ժամանակային բայաձեւերի միջոցով կրկնութիւնները ներառում են ընդհանրական կերպով անցեալն ու ներկան, ներկան ու ապագան, անցեալն ու ապագան: Մասնաւորապէս, հետաքրքրական են այն նմոյշները, որոնք ընդգրկում են անցեալը, ներկան եւ ապագան. «Նա (հակադաշնակցականը) **չհասկացաւ**, **չի հասկանում** եւ **պիտի չհասկանայ** մեր մեծագործ ցեղի խոյանքների իմաստն ու արժէքը» (Հ., էջ 199), «Ազգերն **ունեցել են**, **ունեն** ու **պիտի ունենան** իրենց արժանի ճակատագիրը» (Հ., էջ 113), «Հայրենիք... Դա, հայրենի հողը լինելուց զատ... միութիւն է նաեւ նրանց հետ, որոնք **ապրել են**, որոնք **կապրեն** եւ որոնք **պիտ ապրեն**» (Հ., էջ 114):

Գործողութեան տեւականութիւնը եւս ցոյց է տրւում բայի կրկնութեամբ. «Նա (դաշնակցականը) չի հաւատում... նպաստաւոր պայմանների «կախարդական» ոյժին - նա **աշխատում է, աշխատում** եւ **աշխատո՛ւմ**» (Հ., էջ 235), «...նա, (Գեդէոն Տէր-Մինասեանը) **գրում է, գրում է,** որովհետեւ իրէն ապսպրուած **է գրել**, որովհետեւ չի կարող **չգրել...**» (Հ., էջ 282), «Նա (ժողովուրդը) **կռուել է,** անդադրում **կռուել**... Բայց եւ այնպէս նա **ապրել է, ապրել է,** որովհետեւ ունեցել է վեհ հաւատ»[14]:

**դ. Զայրոյթ**: Զայրոյթը Գ. Նժդեհի երկերում արտայայտւում է նաեւ ճարտասանական հարցերի միջոցով: Այժմ էլ կրկնութեամբ կարելի է ասել, որ Նժդեհը ունէ՛ր, ունէ՛ր, ունէ՛ր պատճառներ զայրանալու: Արդ, անդրադառնանք պատճառներից մի քանիսին. Ինչպէ՞ս է արտայայտւում զայրոյթը կրկնու-

14 ՀՀ Դաշնակցութեան բիւրոյին: ՀՀՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 19-20:

թիւնների միջոցով: Դրանցից մէկը 1921 թ. փետրուարի 1-ին 11-րդ բանակի զինուորայեղափոխական խորհրդի անդամ Հեկկերից ստացած գրութիւնն է, որին պատասխանում է բաց նամակով: Նախ թուարկելով 11-րդ բանակի՝ Ղարաբաղին, Սիւնիքին, Վայոց ձորին հասցրած չարիքները, Նժդեհը գրում է նաեւ. «Ձեր դաւադրութեամբ Հայաստան երկիրը դարձաւ Քեմալստան»: Ապա բացայայտում է թշնամու պատերազմի մարտավարութիւնը: Նրա իւրաքանչիւր ամօթալի միջոցից առաջ, այն է՝ խաբեութիւն, թալան, ահաբեկչութիւն, սադրանք, հակառակորդի երեսին է ութ անգամ նետում «*Ոյժեղը նա չէ...*» շարահիւսական յարակրկնութիւնը (ԱՍ): Գարեգին Նժդեհը պարտուողական մտաւորականութեանը մեր ժողովրդի ամօթն էր համարում. նրա հոգու ցաւոտ տեղերին էին դիպչում այն առաջարկները, թէ պէտք է ներել թուրքին, հաշտուել ու մերձենալ նրա հետ: Այս կապակցութեամբ նա որոտում է «Որդիների պայքարը» աշխատութեան մէջ. «**Ներե՛լ** նրան, որից ծեծուել ես, թքուել, անարգուել: **Ներե՛լ** նրան, որին քեզնից ուժեղ ես զգացել եւ ծունկի եկել նրա առջեւ: **Ներե՛լ** իր բռնակալին... Ինչպիսի մահացու տգիտութիւն եւ բարոյական անկում: Իսկ եթէ թրքութիւնը, հայ պարտուողական, ...թքեց քո եւ քո ներումի երեսի՛ն» (Հ., էջ 135): Ջայրացուցիչ էին 1920-30-ական թուականների հայութեան ներքաղաքական կեանքը, կուսակցութիւնների գործունէութիւնը, մամուլը: Շարունակելով իր վերն արտայայտած միտքը՝ պարտուողական մտաւորականի կեցուածքը որակում է իբրեւ *ժողովրդասպանութիւն*: Այս որակումին նա անդրադարձաւ նաեւ երկու տարի յետոյ՝ 1929 թ. «Բաց նամակներ հայ մտաւորականութեան» աշխատութեան մէջ՝ գրելով. «...շարունակում են նեղսիրտ եւ իրարամերժ կռիւը... կատարում այն, ինչ որ պէտք է արտաքին թշնամուն: Եւ այդ ամէնը միամտօրէն կոչում են ժողովրդասիրութիւն, երբ էապէս **ժողովրդասպանութիւն է տեղի ունեցողը** (ընդգծումը Նժդեհինն է): Այո, **ժողովրդասպանութիւն**» (Հ., էջ 69-70): Իսկ լրագրութեան բնոյթը զայրացկոտ խօսքերով ներկայացուած է «Բաց նամակներ...»ի Ե. մասում եւս: Եօթ պարբերութիւն սկսւում է *Լրագրութիւն* բառ-յարակրկնութեամբ, որին յաջորդում է հերթական արատը եւ դրա վերլուծութիւնը՝ ճշմարտութիւնը գտնելու անկարողութիւն, քծնութիւն, արհամարհանք ազգայինի նկատմամբ, թայֆայականութիւն, ազգերին ուղղուած հայհոյաբանութիւն, դիւանագիտական մակերեսայնութիւն... Եւ ապա եզրակացնում է. «Այսպիսի **լրագրութիւնը** աւելորդ է հայ ժողովուրդին» (Հ., էջ 67-68):

**Ե. Դիմում:** Հեղինակը, տարբեր շարժառիթներով դիմում է ժողովրդին, բնակչութեանը, երիտասարդութեանը, ընթերցողներին, նաեւ անհատներին, ներկա դէպքում՝ կրկնութիւնների միջոցով: Դիմում արտայայտելու համար գործածուած են կոչականները, որպէս ենթակայ՝ երկրորդ դէմքի դերանունը, ճարտասանական հարցերը՝ կոչականով կամ առանց կոչականի՝ երկրորդ դէմքի բայաձեւերով: Ո՞րտեղ պէտք է առաջին հերթին փնտրել կոչականներով

դիմումներ, եթէ ոչ գրութիւններում ու «Խուստուփեան կանչեր» շարքի հրամաններում ու կոչերում՝ ուղղուած զինուորութեանը, սիւնեցիներին՝ լի յուզումնաթրթիռ զգացմունքներով, սպասումներով կամ զայրոյթով: 13.05.1920 թ. կոչում որպէս դիմում-յարակրկնութիւն հնչում է *դապանցինե՛ր* բառը՝ երկու անգամ, 12.02.1920 թ.՝ *զինակիցնե՛ր*՝ երեք, 05.10.1920 թ.՝ *Ղափան*՝ երեք, 19.09.1920 թ.՝ *ընկերնե՛ր*՝ երեք, 17.09.1920 թ.՝ *ժողովո՛ւրդ*՝ տասն անգամ: Մէջբերենք վերջին կոչը՝ որոշ կրճատումներով: *Ժողովուրդ* կոչականը մե՛րթ հնչում է նախադասութիւնների սկզբում՝ իբրեւ յարակրկնութիւն, մե՛րթ նախադասութիւնների միջնամասում՝ իբրեւ միջնակրկնութիւն, եւ մե՛րթ նախադասութիւնների վերջում՝ իբրեւ վերջնակրկնութիւն. «Ղափանի **ժողովրդին** - **Ժողովո՛ւրդ**, քեզ հետ խօսողը քո հրամանատարն է... դու կանչեցիր ինձ, եւ ես հասայ քո հաւարին: Ասա՛, **ժողովո՛ւրդ**, այն օրէն քո երկրում մնա՞ց... մի քար, որի վրայ դրած չլինէի իմ յոգնած գլուխը: Դեռ չեն փակուել թշնամու՝ ինձ հասցրած վերքերը, իսկ քոնը, **ժողովուրդ**, քո հասցրածը միշտ թարմ պիտ մնայ... **Ժողովո՛ւրդ**, այսօր ... դու ... լքում ես, մէնակ թողնում քո վիրաւոր հրամանատարին: ...Քո լրտեսները ... իմ գլուխն են փնտրում՝ երեք միլիոնով Ադրբէյջանին ծախելու: Ապերա՛խտ **ժողովուրդ**: ...Վա՛յ քեզ, **ժողովուրդ**, ինչ պատասխան պիտ տաս Աստծուդ... **Ժողովո՛ւրդ**, կ՛անցնեն օրեր, թշնամին... կը սկսի ... բնաջնջել քեզ: ...**Ժողովո՛ւրդ**, ինձ լքելուց ... առաջ գլացար իմ խնդիրը կատարել... Ներում եմ, թէեւ պատմութիւնը չի ների քեզ եւ խնդրում՝ երբ ինձ սպանուած գտնես, դիակս թաղի Խուստուպի ամենաբարձր կատարին... Աստուած եւ իմ սէրը քեզ հետ, ապերա՛խտ **ժողովուրդ**» (Հ., էջ 425-426):

Ներկայ պահանջով հարկ է առանձնացնել «Բանտային գրառումները»՝ «Իմ տապանագիրը» վերնագրով ենթագլուխը: Կէս էջից էլ պակաս հատուածում *անցորդ* կոչականը գործածուած է վեց անգամ, *կանգ առ* հարադիրը՝ երկու անգամ՝ *լսո՞ւմ ես, գերեզման են ուզում, ասա՛, ի մարտ* բառերից յետոյ (Հ., էջ 407):

*Դու* ենթակայի կրկնութեամբ դիմումներ կան ուղղուած երիտասարդութեանը եւ անհատների: Առաջինը, իհարկէ, մի քանի առիթներով նախ «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութեան մէջ. «**Դո՛ւ**, երիտասարդ զրուցընկեր, **դո՛ւ**, որ հրամայողաբար պիտ լինես ուժեղ, **դո՛ւ** եւս ապաւինիր վսեմ մտածումի փրկարար ոյժին» (Հ., էջ 102):

Անհատներին դիմումի առումով յիշարժան են հետեւեալ հատուածները Գարեգին Նժդեհի՝ Տրաեանովին ուղղուած նամակից եւ Լեապովի դագաղի առաջ նրա արտասանած դամբանականից. «**Դո՛ւք էլ**, **դո՛ւք էլ**, երբ խօսում էք մի գետի, մի պուրակի, մի լերան մասին, ոգիանում է, լեզու առնում ո՛ղջ բնութիւնը» (Հ., էջ 593): «**Դու է՛լ**, **դու էլ** կարող էիր հարուստ լինել, բայց ապրեցիր աղքատ եւ մեռար մենաւոր...» (Հ., էջ 597):

Հարցերի ու կրկնութիւնների միատեղումը նոյն նախադասութեան մէջ,

որպէս դիմում արտայայտելու միջոց, տարածուած իրողութիւն է: Այդպիսին է, օրինակ, հետեւեալ հատուածը դարձեալ «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութիւնից՝ դարձեալ ուղղուած երիտասարդութեանը. «Հա՛յ երիտասարդութիւն, վաղը, երբ թրքութիւնը փորձեց պղծել Հայրենիքիդ սահմանների սրբութիւնը, **պիտ կարողանա՞ս** աւելի սարսափելի լինել, քան թշնամին: **Պիտ կարողանա՞ս** վագրային կեցուածք ցուցադրել: Պատասխանի՛ր, **պիտ կարողանա՞ս**...» (Հ., էջ 132): Կամ վերը մէջբերուած կոչից՝ ուղղուած Սիւնիքի բնակչութեանը. եւ կամ Մայքլ Արլէնին ուղղուած հետեւեալ ճարտասանական դիմումը. «**Չգիտէ՞ք**... որ տողերը կարող են արդարացնել օտար ժողովուրդների արհամարհանքը դէպի հայ դատը: **Չգիտէ՞ք**, որ ձեր ծանօթ տողերը կարող են ինքնանուաստացումի մղել օտար ափերի վրայ ծուարուած հայութիւնը...» (Հ., էջ 472):

**գ. Ընդգծում**: Թերեւս կրկնութիւնների ամենալայն կիրառութիւնն է: Շեշտում են կոնկրէտ զգացումը, առարկան, երեւոյթը, պահանջը, համոզմունքը, յատկանիշը, գործողութիւնը... Ընթերցողի ուշադրութիւնն է գրաւում կրկնուող բառը, ըստ որում՝ ինչքան յաճախ, այնքան սեւեռուն կերպով: «Դաշնակցութեան պանթէոնը» շարքի «Գերեզմանատանը» խոհագրութեան մէջ ընդգծում է քնարական հերոսի շուտափոյթ, հնարաւորին չափ արագ հեռանալու ցանկութիւնը՝ երեք անգամ կրկնելով **փախչել** բայը. «...հոգիս խեղդող թախծի գիշերն աւելի սե՛ւ, աւելի ճնշող է դառնում... Եւ ուզում եմ ճչալ ու **փախչել** ես... **Փախչել** աշխարհից... հեռո՛ւ, շատ հեռու... **Փախչել**՝ դուրս գալ աշխարհից...» (Հ., էջ 415): Ս. Վրացեանին գրած նամակում Նժդեհը ուշադրութիւն է հրաւիրում գաղափարի մարդկանց պակասի վրայ. «Բայց կար **մարդը**, ...ընկեր Վրացեան, **մարդը**, գաղափարի աստուածաշունչ **մարդն** է մեռել, **մարդն** է պակասում մեզ... այս անփառունակ եւ կոշմարային օրերում»[15]: Իսկ «Տարածուող Անին» յօդուածում, վեց անգամ կրկնելով **օգնութիւն** բառը, ուշադրութիւն է հրաւիրում տարագիր դարձած հայերի փրկութեան վրայ. «... հարիւր հազար հայեր իրենց հայեացքն ակամայից կը դարձնեն դէպի հայ գաղութները: **Օգնութեան** կը կանչեն, **օգնութիւն** կը սպասեն, **օգնութիւն**՝ շուտափոյթ, սրտաբուղխ եւ լիաբուռն: Ուշացա՞նք մենք - **օգնութեան** կը փութայ մահը» (Հ., էջ 448): «Իմ պատասխանը» յուշագրութեան հինգերորդ մասը կարդալիս զգացում է, թէ որքա՛ն միայնակ է եղել Սիւնիքը. «...Սիւնիքի դրութիւնը աւելի եւս պիտի ծանրանար: Այժմ դա կտրուած էր ամբողջ աշխարհից: Դա **մենակ** էր այժմ, ողբերգօրէն **մենակ**, **մենակ** քաղաքականապէս, անզինակից՝ կռուադաշտում» (Հ., էջ 301): Բայց եւ տարածւում են եզրափակիչ յաղթական ակորդները. «**Պիտի յաղթել**, **պիտի յաղթել** գոյութեան իրաւունքը չկորցնելու համար» (ԼԳ): Նոյն կերպ նաեւ ուրիշ-ուրիշ ընդգծումների պահանջով: Ահա այդպէս «Բանտային գրառումներ»ի 12-րդ մասի մի հատուածում չորս անգամ

15 ՀՅԴ ԿԱ, Ս. Վ. 5, 22:

կրկնելով *անուն* բառը՝ իւրաքանչիւր դէպքում մատնանշելով մի կարեւոր հանգամանք՝ առաքինի մի կողմ, ընթերցողին է ներկայացնում Վարդան Մամիկոնեանին, վերջին՝ չորրորդ յիշատակման մէջ գրելով. «**Մի անուն** - մի ամբողջ դաւանա՛նք, մի ո՛ւխտ, մի բարոյական իմաստասիրութի՛ւն» (Հ., էջ 404): Ի հակադրութիւն հայրենանուէր մարդու՝ «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութեան հինգերորդ մասում ներկայացւում է սեփական, առօրեայ հաճոյքների համար ապրող անձը՝ հինգ անգամ *նա* դերանուան կրկնութեամբ. իւրաքանչիւր դէպքում նշւում է մի արատ՝ վերջում սպասելի եզրահանգմամբ. «**Նա** դառնում է մեռեալ թիւ եւ ոչ ստեղծագործող անհատ իր ժողովրդի համար» (Հ., էջ 99):

* * *

Ամփոփենք: Որպէս կրկնութիւն (կրկնաբանութիւն) Նժդեհի երկերում հանդէս են գալիս ինքնուրոյն բառերը, բառակապակցութիւնները, նախադասութիւնները, որոնք կրկնւում են 2-10, սակաւ դէպքերում՝ աւելի անգամ՝ կա՛մ յաջորդելով միմեանց, կա՛մ փոքր ու մեծ ընդմիջումներով: Ըստ բնոյթի լինում են հարցական, պարզ կամ երկրորդական լրացումներով: Արտայայտում են առաւելապէս՝ քանակ, յորդոր, ժամանակ ու տեւականութիւն, զայրոյթ, դիմում, ընդգծում:

Քննութեան առնելով Գ. Նժդեհի կրկնութիւնները՝ ինքնաբերաբար պահանջ է առաջանում զուգայեռ անցկացնելու չափածոյում յարակրկնութիւնների ու վերջնակրկնութիւնների վարպետ Համո Սահյանի հետ: Սխալուած չենք լինի, եթէ ասենք, թէ նրա գրեթէ ամեն բանաստեղծութեան մէջ կան կրկնուող տողեր կամ բառեր, որոնք մշտապէս այնքա՛ն տեղին են ու ներդաշնակ համաբնագրի ընդհանուր հիւսուածքին: Դժուար է ցոյց տալ մէկ այլ հայ բանաստեղծի, որի ստեղծագործութիւններում նոյնպիսի հետեւողականութեամբ ու նոյնչափ համատարած լինեն կրկնութիւնները: Ահա արձակում նոյնը պէտք է ասել Գարեգին Նժդեհի վերաբերեալ: Ոչ մի այլ հայ արձակագիր այսպիսի յաճախականութեամբ ու ստեղծագործօրէն չի դիմել *կրկնութիւններ* ոճական միջոցին: Ըստ որում, ասուածը վերաբերում է ոչ միայն Նժդեհի արձակ բանաստեղծութիւններին կամ հրապարակախօսական յօդուածներին, այլեւ գիտական աշխատութիւններին ու պաշտօնական գրութիւններին, ինչը հարկ է ընդգծել: Այլ է գեղարուեստական խօսքը (մանաւանդ քնարականն ու հերոսականը) իր հնարաւորութիւններով, որոնք բխում են այդպիսի ստեղծագործութիւնների բնոյթից, եւ այլ՝ գիտականն ու պաշտօնականը, որտեղ կրկնութիւններ չեն ենթադրւում:

## РЕЗЮМЕ

В сочинениях Г. Нждеха более часто употреблены лексические, сравнительно меньше – синтаксические и редко – фонетические редупликации. Встречаются все проявления редупликаций: анафоры, эпифоры, хаизмы, симплоки, полисиндетоны (многосоюзие). Без интервалов следуют друг другу 2-3, а с интервалами , например в рамках одной маленькой статьи, от 2 до 15 редупликаций. Определенные словосочетания повторяются в инверсионных расстановках. Часто редупликации конструируются в виде вопросительных предложениях. С помощью исследуемого стиллистического средства в сочинениях Г. Нждеха выражаются количество и мера, увещание и призыв, время и длительность, обращение, подчеркивание, а так же настроения – гнев, отрицательное отношение, восторг.

## SUMMARY

In his works, Karekin Nezhdeh more frequently used lexical, comparatively rarely – syntactic and rarely – phonetic reduplications. One can find all the expressions of reduplication: anaphora, epiphora, chiasmus, symploce, polysyndeton. 2-3 reduplications succeed each other without intervals and as to the reduplications with intervals, in the frame of one short article, for example, one can find from 2 to 15 ones. Certain word combinations are repeated in inversions. Frequently, reduplications are made in the form of interrogative sentences. With the help of the stylistic device under consideration, quantity and measure, exhortation and call, time and duration, appeal and emphasis, as well as sentiments – fury, negative attitude and admiration are expressed in the works by Karekin Nezhdeh.